Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ «Երևանի Վրեժ Համբարձումյանի անվան հ.17 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում «Մաթեմատիկա» (18ժամ), «Ինֆորմատիկա» (8ժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- Դիմում(Ձև 1), մեկ լուսանկար 3 × 4 չափի
- Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ):
- Անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում
- Ինքնակենսագրություն
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ – ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր՝ առկայության դեպքում
- Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ. օգոստոսի 29-ից մինչև 2022թ. սեպտեմբերի 9-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 14:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ. սեպտեմբերի 13-ին ժամը 15:00, Երևանի Վրեժ Համբարձումյանի անվան հ.17 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Սասունցի Դավիթ 78:

Տեղեկությունների համար զանգահարել 010 450952 հեռախոսահամարով: